«ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ» ԵՐԿՕՐՅԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Մարտի 1-2-ը «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում CCMS-ի հետ համատեղ անցկացվել են «Հանրակրթական դպրոցի կառավարման խորհրդի գործունեությունը» երկօրյա վերապատրաստման դասընթաց, որին մասնակցում էին Լոռու մարզի 11 դպրոցների տնօրեններ, խորհրդի նախագահներ, անդամներ (թվով 20 մարդ):

Վերապատրաստման դասընթացը վարում էին կրթահամալիրի հիմնադիր տնօրեն Աշոտ Բլեյանը, փոխտնօրեն (Ավագ դպրոցի ղեկավար) Գևորգ Հակոբյանը, խորհրդի նախագահ Արամազդ Դալամքարյանը:

Վերապատրաստման երկրորդ օրը մասնակիցները լրացրեցին գնահատման ծառայության կողմից առաջարկած գնահատման թերթիկներ, որով նրանք 1-5 գնահատման սանդղակով (չեմ տիրապետում տեղեկատվությանը - գիտեմ շատ լավ) գնահատում էին իրենց իմացությունների աստիճանը վերապատրստումից առաջ և հետո նույն թեմաների շուրջ:

Նախատեսված էր հարցումն անցկացնել համատարած ընտրանքով, սակայն հարցաթերթիկ վերադարձրել է մասնակիցների 80% -ը (16 մարդ):

Աղյուսակ 1

	Թեմա	Վերապատրաստումից առաջ				
		2	3	4	5	Պ.չ[1]
1	Ուսումնական հաստատության կառավարում		56,2%(9)	25%(4)	19%(3)	
2	Պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորություններ ու դրանց դադարեցման հիմքեր	6,2%(1)	56,2%(9)	6,2%(1)	31%(5)	
3	Ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունները	6,2%(1)	37,5%(6)	37,5%(6)	19%(3)	
4	Դպրոցի բյուջե, դպրոցի զարգացման ծրագիր		37,5%(6)	25%(4)	31%(5)	6,2%(1)
5	Կառավարման խորհուրդ և դպրոցական խորհուրդ		25%(4)	43,7%(7)	31%(5)	
6	Խորհրդի նախագահի ընտրություն, դպրոցի տնօրենի ընտրություն		19%(3)	37,5%(6)	43,7%(7)	
7	Խորհրդի նիստի օրակարգի հարցեր, խորհրդի նիստ	6,2%(1)	19%(3)	50%(8)	25%(4)	
	Միջին	**6,2%(1)**	**37,5%(6)**	**31%(5)**	**31%(5)**	

Աղյուսակից պարզ է դառնում, որ մասնակիցների պատասխաններից դուրս է մնացել «չեմ տիրապետում տեղեկատվությանը՝ 1 գնահատանիշը»: Վերապատրաստումից առաջ իր իմացությունների մակարդակը 2

[1] **Պ.չ** - պատասխան չկա

միավորով գնահատել է միջինը 1 մարդ (6,2%), 3 միավորով՝ միջինը 6 մարդ (37,5%), 4 միավորով՝ միջինը 5 մարդ (31%), 5 միավորով՝ միջինը 5 մարդ (31%):

Աղյուսակ 2

	Թեմա	Վերապատրաստումից հետո			
		3	4	5	Պ.չ[1]
1	Ուսումնական հաստատության կառավարում	12,5%(2)	62,5%(10)	25%(4)	
2	Պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորություններ ուղրանց դադարեցման հիմքեր	12,5%(2)	50%(8)	37,5%(6)	
3	Ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունները	12,5%(2)	43,7%(7)	43,7%(7)	
4	Դպրոցի բյուջե, դպրոցի զարգացման ծրագիր	12,5%(2)	56,2%(9)	31%(5)	
5	Կառավարման խորհուրդ և դպրոցական խորհուրդ	6,2%(1)	43,7%(7)	43,7%(7)	6,2%(1)
6	Խորհրդի նախագահի ընտրություն, դպրոցի տնօրենի ընտրություն	6,2%(1)	50%(8)	43,7%(7)	
7	Խորհրդի նիստի օրակարգի հարցեր, խորհրդի նիստ	6,2%(1)	50%(8)	43,7%(7)	
	Միջին	**12,5%(2)**	**50%(8)**	**37,5%(6)**	

Աղյուսակից պարզ է դառնում նաև, որ մասնակիցները վերապատրաստումից հետո իրենց իմացությունների աստիճանը գնահատում են ավելի բարձր, քան սկզբում: Այստեղ արդեն բացակայում են 1 և 2 միավորները: Իր իմացությունների մակարդակը 3 գնահատել է մասնակիցներից միջինը 2 մարդ (12,5%) , 4 միավոր՝ միջինը 8 մարդ (50%), 5 միավոր՝ միջինը 6 մարդ (37,5%):

Հարցաթերթիկում կար նաև հարց այն մասին, թե որտեղ են հատկապես տեսնում իրենց գիտելիքների աճը վերապատրաստման մանակիցները:
Այս հարցին պատասխանել էր հարցվողներից 31%-ը (5 մարդ):

Աղյուսակ 3

	Թեմա	Վերապատրաստումից հետո	
		Յուրաքանչյուր հարցի դիմաց շարադրել գիտելիքների աճը՝ (իմացա...)	
		-Ուսումնական հաստատության կառավարումը իրականացնում է տնօրենը:	6,2%(1)

1	Ուսումնական հաստատության կառավարում	-Այն պետք է լինի թափանցիկ, հասանելի, լուսաբանվի կայքի միջոցով:	6,2%(1)
		-Հանրային ծառայությունները օգնում են դպրոցի կառավարման աշխատանքներին:	12,5%(2)
2	Պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորություններ ու դրանց դադարեցման հիմքեր	-Երբ խորհրդի անդամը չի մասնակցում մի քանի նիստերի, ապա դադարեցվում են նրա լիազորությունները:	12,5%(2)
		-Պետական հաստատության խորհրդի անդամները պարտավոր են իրազեկ լինել կառավարման գործընթացին:	6,2%(1)
		-Լիազորություններ դադարեցման հիմքերը պետք է համոզիչ և հիմնավորված լինեն:	6,2%(1)
3	Ուսումնական հաստատության տնօրենը և նրա իրավասությունները	-Տնօրենը համագործակցում է կառավարման խորհրդի հետ:	12,5%(2)
		Հաստատության տնօրենը պարտավոր է աշխատանքներն իրականացնել բաց դաշտում:	6,2%(1)
4	Դպրոցի բյուջե, դպրոցի զարգացման ծրագիր	-Տնօրենը կազմում է դպրոցի զարգացման ծրագիրը, հաստիքացուցակը, բյուջեն և ներկայացնում է, քննարկում է կառավարման խորհրդին:	12,5%(2)
		-Բյուջեն ձևավորվում է ծնողական վարձավճարներից, պետական աշխատավարձից:	12,5%(2)
		-Դպրոցի բյուջեն և զարգացման ծրագիրը անպայման հացանելի և բաց պետք է լինեն:	6,2%(1)
5	Կառավարման խորհուրդ և դպրոցական խորհուրդ	-Խորհրդի անդամը պետք է մասնակցել բոլոր նիստերին, գործել բարեխիղճ:	6,2%(1)
		-Երկուսն էլ ծառայում են նույն նպատակին:	6,2%(1)
		-Կառավարման խորհրդում պետք է ներգրավել ծնողների:	6,2%(1)
		-Կառավարման խորհրդի և դպրոցի խորհրդի աշխատանքները պետք է իրականացվեն միասնական և համատեղ:	6,2%(1)

6	Խորհրդի նախագահի ընտրություն, դպրոցի տնօրենի ընտրություն	-Տնօրենը կամ պաշտոնակատարը չի կարող լինել խորհրդի անդամ: Խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի կազմից:	6,2%(1)
		-Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները: Դպրոցի տնօրենին ընտրում է խորհուրդը:	6,2%(1)
7	Խորհրդի նիստի օրակարգի հարցեր, խորհրդի նիստ	-Խորհրդի նիստերին տնօրենը մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:	12,5%(2)
		-Խորհրդի նիստի օրակարգը կազմում են ելներով առաջացած խնդիրներից: Նիստերը հրավիրվում են պարբերաբար: Անհրաժեշտության դեպքում հրավիրում ե արտահերթ խորհրդի նիստ:	12,5%(2)

Այլ նշումների տակ կային այսպիսի պատասխաններ. *«1.Շնորհակալ ենք պարոն Բլեյանից, կոլեկտիվից և ընդհանրապես հյուրընկալությունից: 2.Շատ տպավորված ենք դպրոցի վիճակից, աշխատանքային ոճից, հյուրընկալությունից: Դպրոցից ընդօրինակելու շատ բան կար»:*

Ստացված արդյունքներից (տես աղյուսակ 3) պարզ է դառնում, որ վեապատրաստման մասնակիցները յուրացրել են տրված տեղեկատվությունը և պատահական չէ 1-ին և 2-րդ աղյուսակների միչև առկա տարբերությունը՝ պայմանավորված միավորների աճով:

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

Գնահատման ծառայության ղեկավար Լուսինե Ալեքսանյան